## 53. ԽԱՁՈՒ ՄԻՍ

Կէղին իրիկ ու կնիկ։ Ընդոնց իսկի զավակ չէղնի։ Ըդոր կնիկ լէ օրով հ՚առաճ իրկան կըսե թե.

— Ընձի տար սըրբ Կարապետ, սըրր Ախպերիկ, բալքի մըզիկ զավակ մէղնի, թըխ էղնի, թըխ ախչիկմ էղնի, ախըր զավակ է։

Անդաջ չէնե, չի տանի, էրիկ կըսե.— Օ՜ֆ, կնի՛կ, օր աստված մարթու չի տա, սրբե՞ր պըտի տան ճիժ մարթուն։

Գելնա կնիկ կքուփոտի, կբռնի ուրին դոստի. «Բալքի ճիժ էղնի ընձի»։

Իդրա իրիկ օրեն մեկ կէրթա կնստի հոդե մի ու ախփափներու մեջ կժղլի ուրին։ Կտեսնի օր թը ախփափներ կուտին կարմցուկ խաղ մի, բաղի կխմին ու խաց կուտին ուրանց։ Նա կասին ըդ մարթուն՝ իդա բախին խմե, նա լէ կասին՝ առ էդ փշուր խաց կե։

Գելնա կքուփոտի ուրին, կլցվի, կուռի կըսե. «Ըդրա քամալ ի՞նչ էր օր չըսին առ իդա պրտուճ քըղիկ»։

Գելնա կհաքնի ուր օտնամներ ու դիդա տուն։

Գիգա տուն, կնիկ դոստն նոր ա ճամփե, ուրախ, ուրախ, շուտ շուտ տեխ կպատրաստե, մինդար կթալե, իրկան կըսե.

— Քա, մարթ, արի նստի։ Օտնամներ կհանե, կըսե.— Տո մարթ, հ՚որի՞ն կքուփոտիս, արի նստի, հ՚որի՞ մատեն էներ ես։

Կուզե օր գիրիկ փորձե, տեսնա ի՞նչ գելնա իդոր մոտեն, ին-

չի՞ ուր մատեն էրեր է։ Իրիկ անգանջ չէնե. «Օ՜ֆ, օ՜ֆ» կէնե ու կէրթա գիգա։

Կնիկ կըսե.— Աստված քու տուն ավիրե, կըսինք զի տար սըրբ Կարապետ, բալքի ընձի տղեմ էղնի, ախչիկմ էղնի. տար սըրբ Ախպերիկ, թըխ էղներ, թըխ ախչիկմ էղներ, ըսի էրթանք քենի ջհել ինք, էսօր մեր վախտ գացեր ա, էլ ի՞նչ ֆայդա, հ՝որի՞ կքուփոտիս։

Կըսե.— Է՜յ, ղու լէ մտի գետին, դուն լէ, տղեն լէ ախչիկ լէ։ Ըսօր ընձի իմալ դարդմ էղեր է օր ըսել չիգա։

Կրսե.— Վո՜ւյ, մարթ, աստված խերն ու բարին էնե, էդ ի՞նչ է քու դարդ, օր քրնց տղեն ու ախչիկ չաթին է։

Կըսե.— Տո՜, կնի՜կ, բան, բան չէ, համան մարթու չաթին գիգա,— կըսե,— Թորոսի հ՝օդեն նստուկ ին ղրաղի կխմեն, ղրաղին կխմեն, ղխաղ կուտեն. հայդե, ես բաղի չխմե, թըխ ասին. «Առ իգա փրթուչ խաղու միս կեր»։

Նոր կնիկ ռհաթավ, միտք սրտեն հ՝ելավ, ըսեց.

— Աստված քու տուն ավիրա, հ՝որի՞ կքփռոտիս, հա՞, հանդե իրեք հոր ցորեն ունիս, իրեք հոր սիսեռ ու ոսպ ունիս, հանդե թիակն ու փետատ, գնա առ հանե կոտմ-էրկու ցորեն, ես ու դու մինակ ինք, առ խաղ մե ու էկո, էփինք, ես լէ ուտիմ, դու լէ ուտիս, էդա ֆուխկարա լէ մրր հետ ուտին, խեղճ ին։

Իրիկ կնկա սիրտ խստկեց, մխիթարեցին զիրար սիրտ ու պառկան քնան։

Առավոտուն գելնա խստու խայիմ կբոռա օր թը Թորոսի տան ախփափներ անգանջ էնին, կըսե.

— Կնի՜կ, կնի՜կ զթիակն ու զփեդատն բե, հանինք ցորեն, տանինք տանք խաղ մի առնինք, բերինք մըզի ուտինք։

Կնիկ կառնե կվազե, կուրբխնա։ Իրիկ կհանա կոտմ էրկու ցորեն, կտանա կուտա կառի[1] խաղ մի ու գիգա տուն, կըսե.

— Կնի՜կ, առ էփի, ըսօր իգանք ուտինք, ֆլանքասի ինատուն։

Կմորթա, կբերա կիտա կնկան. «Էփիս, իրկուն իգանք ուտինք»։ Գելի ղդերընդին կդնե փեչին, հպարտ-հպարտ կէրթա դաշտ՝ քաղի։ Էն օր էրկու իրեք բառթ ցորեն կքաղե, չէ՞ օր խաղի միս պըտի գա օրթր ուտե։

Էղավ իրկուն, դրեց ուր գերընդին ուր փեչին ու էկավ։ Կնիկ

---

1 Կառի՝ չիք (Ս. Կ.)։

զխազ էփեր է, զդոստ կանչեր է, կերած խմած, փրցած, աղատած է, էլ խազ չկա, չէ։

Իրկուն հայ գիգա։ Կնիկ կրերե զհաց կթալե հ՚առաճ։ Էրիկ բաքլա կէնե, շուտե օր թը ուր կնիկ խազ պրտի բերե, կիշե, կիշե. խազ չկա։

Կըսե.— Կնի՛կ, իդա ցամաք հաց հ՚որի՞ դրեր ես իմ հ՚առաճ, ես լուսուն խազ մի մորթեցի, օր էփիր կերակուր, օր թը ես ու դու ուտենք։

Կըսե.— Հիսո՛ւս, Քրիստոս, հըմլա զուր ու բուխտան (զըրպարտություն) լէ մարթ կկապե՞ ուր կնկա վրեն, Հիսո՛ւս, Քրիստոս։

Հայ կմտածե. «Զէ՞ օր ես աշքարա հանեցի զցորեն, տարա. բերեցի, տվեցի էփել, իդա հ՚որի՞ ինքար տվեց»։

Լուսուն էլավ մեկ լէ առավ բերեց։ Առավ բերեց, ըսեց.

— Կնի՛կ, իշե, չէնիս էրեկվան պես, էմլէ էփիս, իգանք ես ու դու ուտինք։

Հայ վերուց ուր գերընդին, գնաց քաղ։ Էգ կնիկ բերեց մեկ լէ էփեց, կանչեց դոստ, կերան ու խմեցին, ուրանց քեֆ խասուցին։

Խեղճ հայ քաղեց, քաղեց շուտ, շուտ, ըսեց. «Ըսօր շուտ իգամ, չէղնի էրեկվա պես էղնի»։

Էկավ տուն։ Կնիկ էլման բերեց չոր հաց ու թալեց իրկան հ՚առեճ։

Իրիկն ըսեց.— Տո՛, կնիկ, էլմա՞ն էրիր էրեկվան պես։

Ըսեց.— Քա՛, ասու սիրուն, անխասկնելի, անգետ մարթ, դու ե՞փ իս խազ բերի, շահագ բե, օր թը խազ իս բերի, չըս բերեր իս։ — Գիլա, կպատռտվի զխալափալա կթալե օր զհայ կէնե գունաքար։

Հայ լէ ի՞նչ էնե, ուր ամոթ կքաշե, կպառկի քնի հարի լուսուն։ Լուսուն գելնի, կէրթա խազ մը կառնե, կըսե.

— Կիրակոս, Մարկոս, Թորոս, Պողոս, Պետրոս շահագ մանցեք, ան հա, ես խազմ է կտանիմ տուն, օր իմ կնիկ էփի ու ուտինք։

Խազ կբերա, կիտա կնկան էփելու։ Ու ինք գելի կէրթա քաղ՝ ուրախ։ Արտի մեշ լէ տերտեր կէղի։

Կըսե.— Տերտեր, քու գեղ հեռու է, քելի էրթանք մեր տուն, քու ախչիկ խազմ է էփեր է, պրտի էրթանք խրդրաց ուտինք։

Իտոնք թրխ մնան իդա տեխ։

Հալբուհալ ախչիկ էփեր է զխազ, կանչեր է դոստ ու թամիղ

էրած ա, մանցի խազի ճուր։ Կբերե նուկի մե գարի ալուր, մեկ լէ կորեկ ալուր, գըլնա քանիմ սաֆա ճուր կեվելցու, կբերե էրկեն, մեծ թընթոց մե ու կբերե կկոճե, կկոճե, թնթոց լէ կգրի մեջ հաբի իրկուն։

Իրիկուն իրիկ կառնե զտերտեր իգա տուն, կըսե.

— Կնիկ, թաղիք մի թալ, մինդար մի թալ, թըխ հայր սուրբ նստե վրեն։

Կնիկ էմլե դոզտու կճուրճրա, թե էդ ֆուխարա տերտեր հ՚որի՞ խափեց բերեց։

Իրիկ գելնի գիգա ուր խեչ, կըսե.— Հ՚որի՞ն հըմալ կէղնիս, կճուրճրաս, հ՚որի զխազ չէփե՞ր իս։

Կըսե.— Էփեր իմ, հըմա հաց չկա, հաց կպակսե։

Կըսե.— Հ՚որի՞ն։

Կըսե.— Իմ հոր տուն հաց շատ կա, խեր ու խեյրաթ էրեր են, գնա առ դաստե մե խաց, էկո։

Իրիկ կվաղե հացի։ Կնիկ իրիցուն կըսե.

— Ես օր թը կփսփսենք, կքուփոտենք, կզրուցենք, դու պտի ըսիր. «Էդ կնիկ ի՞նչ անզգամ կնիկմ է». իմ իրիկ անաստված մարթմ է, էն ապով խափի ճամխեցի օր զքղի ափսոսացի, օր բրզի հանեմ փախցում։

Կըսե.— Իմա՜լ, օրհնած, իմա՞լ։

Կրսե.— Կտեսնա՞ս, զէդա պուտուկ ճաշ։ Զէտ տաք թընթոց լէ կտեսնի՞ս. իդա հըմա տաք տաք պտի մտու քու բոգ, ղաթի դու կվարեճանիս։

Կրսե.— Օրշնած, տուր իմ գավազան, օր փախիմ ազատիմ, ես գիտցա մարթ էր, իմ ժողովուրթն էր։

Տերտեր կառնե զգավազան ու կփախնի։

Մարթ կառնե զդաստա հաց ու գիգա։

Կնիկ կըսե.— Աստված ավիրե քու տուն ու քու կոնըխին, օր դու բերեցիր գող, ավազակ։

Կըսե.— Իմա՞լ, իմա՞լ։

Կըսե.— Տերտեր գողցե զխազ, առե գացե, երբ օր ես գացեր ինք ախպուր ճրի, հարի էկա. իշթա էրեց գողցավ զխազ ու գնաց։

Կըսե.— Փըշըմը չթողե՞ց ընձի։

Կրսե.— Չէ՛, հ՚մեն առե, գացե։

Կրսե.— Իմ փեստ տուր, սանք վաղիմ էրթամ բելքի փըշըմը առնիմ հ՚իդամ։

Կվազե, վազե ետև, կըսե.— Տերտեր, կանի, տերտեր կանի։

Տերտեր օր կտեսնա թը մարթ փետ ծեռ կվազե ուր ետև, կըսե.— Օրհնա՞ծ,. օրհնա՞ծ, ընձի լախա չկա, իմ մորուս կճոզոտի, ես կմեռնիմ։

Էնի գինա թե մարթ էկեր է թընթոց պտի իդոր բերան խըռըսկե։

Կթոզնին կփախին ու իրար կկորցուն։ Բռնին զիրար կփաթթին ու կթալին էրկուս լէ դետ։

Էդմլա կնիկն ու գոստ կխասին ուրանց մուրազին։